

**ԿԱՊԱԼԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ  
ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ  
ԵՔ-ԳՀԱՇՁԲ-21/29-3**

Ք. Երևան

“ 02 ” հունիսի 2021 թ.

Երևանի քաղաքապետարանը, ի դեմս աշխատակազմի գնումների վարչության պետ Է. Կիրակոսյանի, որը գործում է Երևանի քաղաքապետի 14.11.2018 թվականի թիվ 3407-Ա որոշման հիման վրա (այսուհետև՝ Պատվիրատու), մի կողմից, և <<ԷՆՔԱՂՇԻՆ>> ՍՊԸ-ն, ի դեմս Ընկերության տնօրեն Վ. Հովհաննիսյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Կապալառու), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

**1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ**

1.1 Կապալառուն պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել սույն պայմանագրի (այսուհետև՝ պայմանագիր) N 1 Հավելվածով սահմանված ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված **Երևան քաղաքի Աջափնյակ, Էրեբունի և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների բազմաբնակարան շենքերի հարթ տանիքների վերանորոգման** աշխատանքները (այսուհետև՝ աշխատանք), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարված աշխատանքը և վարձատրել դրա համար:

1.2 Պայմանագրով նախատեսված աշխատանքները կատարվում են << օրենսդրությամբ սահմանված ստանդարտներին, շինարարական նորմերին և կանոններին, աշխատանքի նախագծին, ինչպես նաև պայմանագրի անբաժանելի մասը կազմող աշխատանքի ծավալաթերթ-նախահաշվին համապատասխան:

1.3 Պայմանագրով նախատեսված աշխատանքները սկսվում են պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո և կատարման ժամկետը սահմանվում է՝ **Համաձայն հավելված 2-ի:**

Պայմանագրով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների կատարման ժամկետները որոշվում են կողմերի կողմից համաձայնեցված օրացուցային գրաֆիկով (Հավելված N 2):

**2. ԿԱՊԱԼԱՌՈՒԻ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԿԱՏԱՐԵԼԸ**

2.1 Աշխատանքը կատարվում է Կապալառուի ուժերով, նյութերով և միջոցներով:

2.2 Կապալառուն պատասխանատվություն է կրում իր տրամադրած նյութերի և սարքավորումների որակի համար:

**3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

**3.1. Պատվիրատուն իրավունք ունի՝**

3.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կապալառուի իրականացրած աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը:

3.1.2 Կապալառուի կողմից պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետի (ներառյալ օրացուցային գրաֆիկի) խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել աշխատանքի կատարման նոր ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.1.3 Չընդունել աշխատանքի արդյունքը՝ << օրենսդրությամբ սահմանված դրույթներին, պայմանագրի 1.2 կետով նախատեսված փաստաթղթերի պահանջներին չհամապատասխանելու դեպքում՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը, ինչպես նաև 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.1.4 Միակողմանի լուծել պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե.

ա) Կապալառուն ժամանակին չի սկսում աշխատանքի կատարումը կամ աշխատանքը կատարում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար,

բ) Կապալառուն խախտել է պայմանագրի 1.3 կետում նախատեսված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը),

գ) Կապալառուի կողմից կատարված աշխատանքը չի համապատասխանում նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջներին,

դ) Կապալառուի կողմից խախտվել են պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով աշխատանքի թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետները:

3.1.5 Աշխատանքի արդյունքի թերությունների հետ կապված պահանջներ ներկայացնել երաշխիքային ժամկետում:

3.1.6 Լիազորել այլ անձի՝ աշխատանքի իրականացման նկատմամբ տեխնիկական հսկողություն իրականացնելու նպատակով:

3.1.7 Մինչև Պատվիրատուի կողմից Կապալառուի կատարած աշխատանքի արդյունքն ընդունելը, պահանջել իրեն հանձնելու անավարտ աշխատանքի արդյունքը՝ պայմանագիրն օրենքով կամ պայմանագրով նախատեսված հիմքերով դադարեցնելու դեպքում:

### **3.2. Պատվիրատուն պարտավոր է՝**

3.2.1 Աշխատանքը կատարելիս՝ աջակցել Կապալառուին պայմանագրով նախատեսված դեպքերում, ծավալով և կարգով:

3.2.2 Պայմանագրով նախատեսված ժամկետում և կարգով Կապալառուի մասնակցությամբ զննել և ընդունել կատարված աշխատանքը (դրա արդյունքը), իսկ պայմանագրից աշխատանքի արդյունքը վատթարացնող շեղումներ կամ աշխատանքում այլ թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ հայտնել Կապալառուին:

3.2.3 Պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից 5 աշխատանքային օրվա ընթացքում Կապալառուին տրամադրել աշխատանքի իրականացման համար համապատասխան տարածք:

3.2.4 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կապալառուին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները:

### **3.3. Կապալառուն իրավունք ունի՝**

3.3.1 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքը հանձնելու դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու պայմանագրի 5.1 կետով նախատեսված՝ վճարման ենթակա գումարը:

3.3.2 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.4 կետում նշված ժամկետների խախտման դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները և պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

### **3.4. Կապալառուն պարտավոր է՝**

3.4.1 Աշխատանքները կատարել անձամբ, պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իր ուժերով, գործիքներով, մեխանիզմներով, ինչպես նաև անհրաժեշտ նյութերով ու պատշաճ որակով՝ նախագծին և ծավալաթերթին համապատասխան:

3.4.2 Կատարել աշխատանքի վերաբերյալ Պատվիրատուի տված ցուցումները, եթե դրանք չեն հակասում պայմանագրի պայմաններին:

3.4.3 Ապահովել շինմոնտաժային աշխատանքների կատարումը շինարարական նորմերին, կանոններին ու տեխնիկական պայմաններին համապատասխան, կատարել իր կողմից մոնտաժված սարքավորման (էլեկտրական, ջեռուցման, ջրամատակարարման, կոյուղու, օդափոխիչ և այլն) անհատական փորձարկում, մասնակցել սարքավորման համալիր փորձարկմանը:

3.4.4 Աշխատանքի արդյունքը Պատվիրատուին հանձնելիս նրան հայտնել այն պահանջների և կանոնների մասին, որոնց պահպանումն անհրաժեշտ է աշխատանքի արդյունքի արդյունավետ և անվտանգ օգտագործման համար, ինչպես նաև տեղեկություններ հաղորդել այդ պահանջները և կանոնները չպահպանելու հնարավոր հետևանքների մասին:

3.4.5 Պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը) խախտելու և Պատվիրատուի կողմից աշխատանքի կատարման նոր ժամկետ սահմանվելու դեպքում, ապահովել աշխատանքի կատարումը սահմանված ժամկետում և յուրաքանչյուր ուշացված օրվա համար վճարել պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.4.6 Պայմանագրի 3.1.4 կետով նախատեսված հիմքերով պայմանագրի լուծման դեպքում հատուցել Պատվիրատուին պատճառված վնասները և վճարել 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.4.7 Շինարարության օբյեկտի կոնսերվացման անհրաժեշտության ծագման դեպքում՝ իր միջոցներով կատարել աշխատանքը դադարեցնելու և շինարարությունը կոնսերվացնելու անհրաժեշտությունից բխող ողջամիտ ծախսերը:

3.4.8 Եթե շինարարական ծրագրերի կատարման արդյունքի կամ դրա առանձին բաղադրիչի համար սահմանված երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.9 Պայմանագրով երաշխիքային ժամկետ է սահմանվում Պատվիրատուի կողմից ողջ ծավալով Աշխատանքն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից հաշված 365 օրացուցային օր: Եթե երաշխիքային

ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված Աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.11 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

#### **4. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ**

4.1 Կատարված աշխատանքը ընդունվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով աշխատանքի կատարման համար նախատեսված օրը ներառյալ Կապալառուն Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 4.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է [www.procurement.am](http://www.procurement.am) հասցեով գործող կայքի էլեկտրոնային գնումներե բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 4): Ընդ որում Կապալառուն հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է [www.procurement.am](http://www.procurement.am) հասցեով գործող կայքի Օրենսդրությունե բաժնի Ֆինանսների նախարարի հրամաններե ենթաբաժնում):

4.2 Եթե կատարված աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 4.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 20 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

4.3 Եթե կատարված աշխատանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կապալառուի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

4.4 Եթե պայմանագրի 4.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում կատարված աշխատանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա կատարված աշխատանքը համարվում է ընդունված և պայմանագրի 4.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4.5 Աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների արդյունքները նախագծանախահաշվային փաստաթղթերին չհամապատասխանելու դեպքում կողմերը կազմում են երկկողմ ակտ՝ թվարկելով թերությունների վերացման համար պահանջվող՝ կատարման ենթակա լրացուցիչ աշխատանքները և ժամկետները: Կապալառուն պարտավոր է պայմանագրային գնի սահմաններում, առանց լրացուցիչ վճարի, կատարել անհրաժեշտ աշխատանքներ:

4.6 Աշխատանքն ընդունելիս կիրառվում են նաև հետևյալ պայմանները՝

1) Կապալառուի կողմից շինարարության ավարտի մասին տեղեկություն ստանալուց հետո Պատվիրատուի ղեկավարը ձեռնարկում է միջոցներ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված հանձնաժողով ձևավորելու և կատարված աշխատանքներն ընդունելու համար:

2) պայմանագրի կատարման արդյունքը համարվում է ամբողջությամբ ընդունված պետական կառավարման մարմնի ղեկավարի՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված կարգով ձևավորված հանձնաժողովի (այսուհետ՝ ընդունող հանձնաժողով) կողմից կատարված աշխատանքներն ընդունվելու դեպքում:

3) մինչև ավարտված շինարարական օբյեկտի ընդունումը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 9-ի N 596-Ն որոշման համապատասխան ստեղծված

հանձնաժողովը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փաստագրում է ավարտված շինարարության օբյեկտը և կազմում օբյեկտը շահագործման ընդունող հանձնաժողովի ակտ:

4) սույն կետի 3-րդ ենթակետում նշված ակտը սահմանված կարգով ստանալուց հետո պատասխանատու ստորաբաժանումն ստուգում է ավարտված շինարարական օբյեկտի (կատարված աշխատանքների) համապատասխանությունը պայմանագրի պահանջներին և, եթե կատարված աշխատանքը՝

ա. համապատասխանում է պայմանագրի պայմաններին, ապա ստորագրվում է պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրություն,

բ. չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա արձանագրություն չի ստորագրվում:

5) մինչև սույն կետով նախատեսված պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրությունն ստորագրելը՝ Պատվիրատուն չի վճարում կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսը, իսկ տարաժամկետ վճարելու դեպքում՝ վերջին վճարման գումարը, որը չի կարող պակաս լինել կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսից:

#### **5. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՆԸ ԵՎ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆԸ**

5.1 Սույն պայմանագրի ընդհանուր գինը կազմում է 97976868 (իննսունյոթ միլիոն ինը հարյուր յոթանասունվեց հազար ութ հարյուր վաթսուներեք) ՀՀ դրամ, որից 16329478 (տասնվեց միլիոն երեք հարյուր քսանինը հազար չորս հարյուր յոթանասուններեք) ՀՀ դրամը՝ ԱԱՀ-ն: Գինը ներառում է Կապալառուի կողմից իրականացվող բոլոր ծախսերը:

5.2 Աշխատանքի գինը կայուն է և Կապալառուն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

5.3 Պատվիրատուն վճարում է աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված՝ առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների՝ պայմանագրի 4-րդ բաժնով նախատեսված կարգով ընդունելու դեպքում Հայաստանի Հանրապետության դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կապալառուի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցները փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

#### **6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ**

6.1 Կապալառուն պատասխանատվություն է կրում Աշխատանքի որակի և սույն պայմանագրի 1.3 կետով (ներառյալ օրացուցային գրաֆիկը) նախատեսված ժամկետի պահպանման համար:

6.2

Աջափնյակ վարչական շրջան

Սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կապալառուից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված Աշխատանքի գնի 0,1 (զրո ամբողջ մեկ տասնորդական) տոկոսի չափով:

Էրեբունի վարչական շրջան

Սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կապալառուից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված Աշխատանքի գնի 0,15 (զրո ամբողջ տասնհինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջան

Սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կապալառուից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված Աշխատանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3

Աջափնյակ վարչական շրջան

Պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով Պատվիրատուի կողմից աշխատանքը չընդունվելու, ինչպես նաև 3.1.4 կետով նախատեսված կարգով պայմանագիրը լուծելու դեպքում Կապալառուից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 5.1 կետում նախատեսված գումարի 1 (մեկ) տոկոսի

չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև աշխատանքի արդյունքը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում

Էրեբունի վարչական շրջան

Պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով Պատվիրատուի կողմից աշխատանքը չընդունվելու, ինչպես նաև 3.1.4 կետով նախատեսված կարգով պայմանագիրը լուծելու դեպքում Կապալառուից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 5.1 կետում նախատեսված գումարի 15 (տասնհինգ) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև աշխատանքի արդյունքը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում

Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջան

Պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով Պատվիրատուի կողմից աշխատանքը չընդունվելու, ինչպես նաև 3.1.4 կետով նախատեսված կարգով պայմանագիրը լուծելու դեպքում Կապալառուից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 5.1 կետում նախատեսված գումարի 0.5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև աշխատանքի արդյունքը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Կապալառուին վճարվող գումարների հետ:

6.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.3 կետով նախատեսված ժամկետների խախտման համար Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքների վճարումը կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները կատարելուց:

## **7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)**

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

## **8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ**

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կապալառուն ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կապալառուի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության

օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագրի կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող աշխատանքի ծավալների կամ ձեռք բերվող աշխատանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.8 Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կապալառուի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել աշխատանքի օգտագործման պահանջը, իսկ Կապալառուի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե աշխատանքների կատարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կապալառու կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կապալառուի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կապալառուն:

8.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.11 Կապալառուի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է [www.procurement.am](http://www.procurement.am) հասցեով գործող ինտերնետային կայքի Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կապալառուն, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կապալառուի էլեկտրոնային փոստին:

8.12 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.13 Սույն պայմանագիրը կազմված է 7 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3, N 4 և N 4.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.14 Սույն պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8.15 Սույն պայմանագրով նախատեսված Պատվիրատուի իրավունքներն ու պարտականությունները իրականացնում են **Երևան քաղաքի Աջափնյակ, Էրեբունի և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ղեկավարների աշխատակազմը**:

**9. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

**Պատվիրատու**

Երևանի քաղաքապետարան  
ք.Երևան 0015, Արգիշտիի փ. 1  
Կենտրոնական գանձապետարան  
Հ/Հ

ՀՎՀՀ 02593108

Է. Կիրակոսյան



**Կապալառու**

“ԷՆՔԱՂՇԻՆ” ՍՊԸ  
ք.Գավառ, Միքայելյան 20

“Արդշինբանկ” ՓԲԸ

Հ/Հ 2474601943730000

ՀՎՀՀ 08416027

Վ. Հովհաննիսյան



(ստորագրություն)

Կ.Տ.

Հավելված թիվ 1  
<<02>>, հունիսի 2021 թ. կնքված  
կնքված աշխատանքների կատարման  
թիվ << ԵԲ-ԳՀԱՇՁԲ-21/29-3>> գնման պայմանագրի

| Երևան քաղաքի Աջափնյակ վարչական շրջանի բազմաբնակարան շենքերի հարթ տանիքների վերանորոգում<br>16 թաղ. 32, 14 ,18, 15, 20 ,33, 29, 27, 28, 46, 40 շենքեր, Հ/Ա Գ-3 թաղ. 6 Ա, 14, շենքեր |                                                                                                                                                                                                                                                                                                                                      |               |        |                |                      |
|------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------|--------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------|---------------|--------|----------------|----------------------|
| N/N                                                                                                                                                                                | Աշխատանքի անվանումը                                                                                                                                                                                                                                                                                                                  | Չափման միավոր | Քանակը | Միավորի արժեքը | Ընդ.արժեքը /հազ.դր./ |
| 1                                                                                                                                                                                  | Ջրամեկուսիչ հին փաթեթանյութի քանդում, տանիքից իջեցում                                                                                                                                                                                                                                                                                | քմ            | 1500.0 | 0.20           | 300.00               |
| 2                                                                                                                                                                                  | Քայքայված և ջարդված ցեմենտ ավազյա շերտի քանդում, տանիքից իջեցում                                                                                                                                                                                                                                                                     | քմ            | 800.0  | 0.10           | 80.00                |
| 3                                                                                                                                                                                  | Մետաղական թիթեղների քանդում                                                                                                                                                                                                                                                                                                          | քմ            | 75.0   | 0.13           | 9.75                 |
| 4                                                                                                                                                                                  | Չափարների քանդում                                                                                                                                                                                                                                                                                                                    | հատ           | 20.0   | 0.70           | 14.00                |
| 5                                                                                                                                                                                  | Ցեմենտ ավազյա շերտի իրականացում 30մմ հաստությամբ                                                                                                                                                                                                                                                                                     | քմ            | 1500.0 | 1.20           | 1800.00              |
| 6                                                                                                                                                                                  | Ջրամեկուսիչ գորգի մեկ շերտ իրականացում պոլիէթերային կտորի հիմքով /հաստությունը 3մմ և ավելի, 1քմ-ի զանգվածը 4կգ և ավելի ջերմաձկունությունը -/25-15/ C, +/70-85/C վերին շերտը պատված բազալտե խոշորահատիկ ծածկույթով / ներառյալ նյութի բարձրացումը տանիք                                                                                | քմ            | 3980.0 | 2.20           | 8756.00              |
| 7                                                                                                                                                                                  | Ջրամեկուսիչ գորգի երկշերտ իրականացում պոլիէթերային կտորի հիմքով /ներքին շերտի հաստությունը 2,5մմ և ավելի, 1քմ-ի զանգվածը 3կգ և ավելի վերին շերտի հաստությունը 3մմ և ավելի 1քմ. զանգվածը 4կգ և ավելի, ջերմակայունությունը -/25-15/ C, +/70-85/C վերին շերտը պատված բազալտե խոշորահատիկ ծածկույթով / ներառյալ նյութի բարձրացումը տանիք | քմ            | 3000.0 | 3.55           | 10650.00             |
| 8                                                                                                                                                                                  | Եզրապատերի սվաղի նորոգում                                                                                                                                                                                                                                                                                                            | քմ            | 100.0  | 1.30           | 130.00               |
| 9                                                                                                                                                                                  | Եզրապատերի երեսպատում չժանգոտվող թիթեղով                                                                                                                                                                                                                                                                                             | քմ            | 80.0   | 2.40           | 192.00               |
| 10                                                                                                                                                                                 | Օդափոխության հորանների ծածկի իրականացում ցինկապատ մետաղյա թիթեղով /0.55/                                                                                                                                                                                                                                                             | քմ            | 24.0   | 2.40           | 57.60                |
| 11                                                                                                                                                                                 | Նոր ձափարների տեղադրում                                                                                                                                                                                                                                                                                                              | հատ           | 15.0   | 25.00          | 375.00               |

|    |                                     |   |       |      |          |
|----|-------------------------------------|---|-------|------|----------|
| 12 | Շին.աղբի բարձում և տեղափոխում 12 կմ | տ | 110.0 | 1.90 | 209.00   |
|    | Ընդամենը                            |   |       |      | 22573.35 |
|    | ԱԱՀ 20 %                            |   |       |      | 4514.67  |
|    | Ընդամենը                            |   |       |      | 27088.02 |

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ

**Երևան քաղաքի Աջափնյակ վարչական շրջանի բազմաբնակարան շենքերի հարթ տանիքների վերանորոգում**  
Պետք է իրականացվեն Երևան քաղաքի Աջափնյակ վարչական շրջանի բազմաբնակարան բնակելի շենքերի թվով 13 հատ տանիքների 6980քմ ընդհանուր մակերեսով վերանորոգման աշխատանքներ:

- Աշխատանքների նկարագրություն
- Ջրամեկուսիչ հին փաթեթանյութի քանդում, տանիքից իջեցում
  - Քայքայված և ջարդված ցեմենտ ավազյա շերտի քանդում, տանիքից իջեցում
  - Մետաղական թիթեղի քանդում
  - Ձագարների քանդում
  - Ցեմենտ ավազյա շերտի իրականացում 30մմ հաստությամբ
  - Ջրամեկուսիչ գորգի մեկ շերտ իրականացում պոլիէթերային կտորի հիմքով վերին շերտը պատված բազալտե խոշորահատիկ ծածկույթով / հաստությունը 3մմ և ավելի, 1քմ -ի զանգվածը 4կգ և ավելի, ջերմաճկունությունը -(25 -15)C , +(70-85)C
  - Ջրամեկուսիչ գորգի երկշերտ իրականացում պոլիէթերային կտորի հիմքով /ներքին շերտի հաստությունը 2.5մմ և ավելի,պատված պոլիմերային թաղանթով, 1քմ -ի զանգվածը 3կգ և ավելի. վերին շերտի հաստությունը 3մմ և ավելի, պատված բազալտե խոշորահատիկ ծածկույթով, 1քմ -ի զանգվածը 4կգ և ավելի, ջերմաճկունությունը -(25 -15)C , +(70-85)C
  - Եզրապատերի սվաղի նորոգում
  - Եզրապատերի երեսապատում մետաղական չժանգոտվող թիթեղով 0.5մմ
  - Օդափոխության հորանների ծածկի իրականացում ցինկապատ մետաղյա թիթեղով /0.55/
  - Նոր ձագարների տեղադրում
  - Շինարարական աղբի բարձում և տեղափոխում 12կմ
  - Գների մեջ ներառված է շինարարության մեջ օգտագործվող հիմնական, օժանդակ և այլ նյութերն,շիբն. նյութերի տեղափոխությունը ու այլ ծախսերը:
  - Հարթ տանիքների հիմնանորոգման աշխատանքների երաշխիքային ժամկետ սահմանել երեք տարի
- Նշված աշխատանքները պետք է իրականացվեն Աջափնյակ վարչական շրջանի կողմից տրվող պատվեր առաջադրանքի հիման վրա:

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԱՌԱՋԱՂՐԱՆՔ

Աշխատանքներն իրականացնել շինարարական նորմերին, կանոններին ու տեխնիկական պայմաններին համապատասխան:  
Ապահովել շինարարության ժամանակ օգտագործվող շինարարական նյութերի որովքը հաստատող փաստաթղթերի /սերտեֆիկատներ, տեխնիկական անձնագրեր, լաբորոտոր ստուգման և փորձարկման մասին հաշվետվություններ և այլն/ և դրանց համապատասխանություն ստանդարտներին, տեխնիկական ու այլ նորմատիվային պահանջներին:

ԾԱՎԱԼԱԹԵՐԹ – ՆԱԽԱՀԱՇԻՎ

2021թ Էրեբունի վարչական շրջանի բազմաբնակարան շենքերի հարթ տանքիների վերանորոգման աշխատանքներ:

1. Արցախի պող. հ. 6ա, 2. Արցախի պող. հ. 8, 3. Արցախի պող. հ. 8բ, 4. Արցախի պող. հ. 10գ, 5. Արցախի պող. հ. 10բ, 6. Արցախի պող. հ. 22/1, 7. Արցախի պող. հ. 34/2, 8. Աթոյան անց. հ. 8, 9. Աթոյան անց. հ. 10, 10. Աթոյան անց. հ. 12, 11. Աթոյան անց. հ. 12/3, 12. Աթոյան անց. հ. 18, 13. Աթոյան անց. հ. 20, 14. Ազատամարտիկների փող. հ. 78, 15. Էրեբունի փող. հ. 1, 16. Ռոստոմյան փող. հ. 36, 17. Ավանետովի փող. հ. 24, 18. Ավանետովի փող. հ. 26, 19. Գ. Մահարու փող. հ. 127, 20. Գ. Մահարու փող. հ. 127/1, 21. Խ. Դոնի փող. հ. 1, 22. Խ. Դոնի փող. հ. 1/1, 23. Խ. Դոնի փող. հ. 1/2, 24. Խ. Դոնի փող. հ. 4, 25. Խ. Դոնի փող. հ. 5, 26. Խ. Դոնի փող. հ. 15, 27. Խ. Դոնի փող. հ. 19, 28. Խ. Դոնի փող. հ. 19/1, 29. Խ. Դոնի փող. հ. 23, 30. Խ. Դոնի փող. հ. 27

| h/h                         | Աշխատանք. անվանումը                                                                                                                                                                                                                                                                                                   | Չափի միավոր | Քանակ  | Միավորի ընդ.արժեքը | Ընդ.արժեքը /հազ.դր./ |
|-----------------------------|-----------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------|-------------|--------|--------------------|----------------------|
| 1                           | 2                                                                                                                                                                                                                                                                                                                     | 3           | 4      | 5                  | 6                    |
| <i>Քանդման աշխատանքներ</i>  |                                                                                                                                                                                                                                                                                                                       |             |        |                    |                      |
| 1                           | Ջրամեկուսիչ շերտի քանդում                                                                                                                                                                                                                                                                                             | քմ          | 8560.0 | 0.10               | 856.00               |
| 2                           | ց/ավազե հարթեցնող շերտի քանդում                                                                                                                                                                                                                                                                                       | քմ          | 2570.0 | 0.09               | 231.30               |
| 3                           | Պարապետի մետաղական թիթեղների քանդում                                                                                                                                                                                                                                                                                  | քմ          | 710.0  | 0.20               | 142.00               |
| 4                           | Շին.աղբի բարձում և տեղափոխում /Նուբարաշենի խճուղուն հարող աղբավայր/                                                                                                                                                                                                                                                   | տ           | 28.7   | 2.70               | 77.49                |
| <i>Վերանոր. աշխատանքներ</i> |                                                                                                                                                                                                                                                                                                                       |             |        |                    |                      |
| 1                           | ց/ավազե հարթեցնող շերտի իրականացում 3սմ հաստ.                                                                                                                                                                                                                                                                         | քմ          | 2570.0 | 0.90               | 2313.00              |
| 2                           | Եզրապատերի սվաղի նորոգում                                                                                                                                                                                                                                                                                             | քմ          | 280.0  | 1.20               | 336.00               |
| 3                           | Պարապետի երեսպատում ցինկապատ մետաղական թիթեղով 0,5մմ                                                                                                                                                                                                                                                                  | քմ          | 710.0  | 2.40               | 1704.00              |
| 4                           | Ջրամեկուսիչ գորգի երկշերտ իրականացում պոլիէթերային կտորի հիմքով /ներքին շերտի հաստությունը 2,5մմ և ավելի պատված պոլիմերային թաղանթով 1ք/մ-ի զանգվածը 3կգ և ավելի, վերին շերտի հաստությունը 3մմ և ավելի, պատված բազալտե խոշորահատիկ ծածկույթով 1ք/մ-ի զանգվածը 4 կգ և ավելի, ջերմաձկունությունը - (25-15)C, + (70-85)C | քմ          | 9510.0 | 3.40               | 32334.00             |
| 5                           | Օդափոխության հորանների ծածկի իրականացում ցինկապատ մետաղա թիթեղով /0,5մմ/                                                                                                                                                                                                                                              | քմ          | 75.0   | 2.40               | 180.00               |

|          |  |  |  |           |
|----------|--|--|--|-----------|
| Ընդամենը |  |  |  | 38173.79  |
| ԱԱՀ 20 % |  |  |  | 7634.758  |
| Ընդամենը |  |  |  | 45808.548 |

### ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ

Գնման առարկա է հանդիսանում Երևան քաղաքի Էրեբունի վարչական շրջանի բազմաբնակարան շենքերի հարթ տանիքների վերանորոգման աշխատանքները:  
Վերանորոգվելու են՝

1. Արցախի պող. հ. 6ա,
2. Արցախի պող. հ. 8,
3. Արցախի պող. հ. 8բ,
4. Արցախի պող. հ. 10գ,
5. Արցախի պող. հ. 10բ,
6. Արցախի պող. հ. 22/1,
7. Արցախի պող. հ. 34/2,
8. Աթոյան անց. հ. 8,
9. Աթոյան անց. հ. 10,
10. Աթոյան անց. հ. 12,
11. Աթոյան անց. հ. 12/3,
12. Աթոյան անց. հ. 18,
13. Աթոյան անց. հ. 20,
14. Ազատամարտիկների փող. հ. 78,
15. Էրեբունի փող. հ. 1,
16. Ռոստոմյան փող. հ. 36,
17. Ավանեսովի փող. հ. 24,
18. Ավանեսովի փող. հ. 26,
19. Գ. Մահարու փող. հ. 127,
20. Գ. Մահարու փող. հ. 127/1,
21. Խ. Դոնի փող. հ. 1,
22. Խ. Դոնի փող. հ. 1/1,
23. Խ. Դոնի փող. հ. 1/2,
24. Խ. Դոնի փող. հ. 4,
25. Խ. Դոնի փող. հ. 5,
26. Խ. Դոնի փող. հ. 15 ,
27. Խ. Դոնի փող. հ. 19 ,
28. Խ. Դոնի փող. հ. 19/1,,
29. Խ. Դոնի փող. հ. 23,
30. Խ. Դոնի փող. հ. 27

Ընդամենը 30 շենք

Կատարվելու են հետևյալ վերանորոգման աշխատանքները

1. Զրամեկուսիչ շերտի քանդում
2. Ց/ավազե հարթեցնող շերտի քանդում
3. Պարապետի մետաղական թիթեղների քանդում
4. Ց/ավազե հարթեցնող շերտի իրականացում՝ 3 սմ հաստությամբ
5. Եզրապատերի սվաղի նորոգում

6. Պարապետի երեսապատում ցինկապատ մետաղական թիթեղով 0.50մմ
7. Ջրամեկուսիչ գորգի երկշերտ իրականացում պոլիէթերային կտորի հիմքով /ներքին շերտի հաստությունը 2.5մմ և ավելի, պատված պոլիմերային թաղանթով, 1քմ -ի զանգվածը 3կգ և ավելի, վերին շերտի հաստությունը 3մմ և ավելի, պատված բազալտե խոշորահատիկ ծածկույթով, 1քմ -ի զանգվածը 4կգ և ավելի, ջերմաձկունությունը  $-(25 - 15)^{\circ}\text{C}$ ,  $+(70 - 85)^{\circ}\text{C}$ , ներառյալ նյութի բարձրացումը տանիք/
8. Փափուկ ծածկույթի եզրերը պետք է իրար ծածկեն 5-10սմ
9. Իրականացնել ջրամեկուսիչ մեկ շերտ երեսապատում օդափոխության հորանների և վերելակի մեքենայական սենյակի պատերի հետ տանիքի միացման հանգույցներում /4մմ հաստությամբ/
10. Իրականացնել 0.50մմ հաստությամբ ցինկապատ մետաղյա թիթեղով օդափոխության հորանների ծածկերի տեղադրման աշխատանքներ
11. Շինարարական աղբի բարձում և տեղափոխում /Նուբարաշենի խճուղուն հարող աղբավայր/
12. Տանիքում մաքրության ապահովում շինաշխատանքների կատարման ընթացքում և ավարտից հետո:

Հարթ տանիքների հիմնանորոգման աշխատանքների երաշխիքային ժամկետ է սահմանվում

365 օրացույցային օր:



ԾԱՎԱԼԱԹԵՐԹ – ՆԱԽԱՀԱՇԻՎ

Երևան քաղաքի Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանի բազմաբնակարան շենքերի հարթ տանիքների վերանորոգման աշխատանքներ

| №                           | Աշխատանքների անվանումը                                                                                                                                                                                                                                                                                                  | Չափի միավորը | Քանակը | Միավորի արժեքը | Ընդ.արժեքը /հազ.դր./ |
|-----------------------------|-------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------|--------------|--------|----------------|----------------------|
| 1                           | 2                                                                                                                                                                                                                                                                                                                       | 3            | 4      | 5              | 6                    |
| <b>Քանդման աշխատանքներ</b>  |                                                                                                                                                                                                                                                                                                                         |              |        |                |                      |
